

Բ Ա Ն Ա Ս Ի Ռ Ա Կ Ա Ն

ՀԱՅԵՐԻՆ ՆՈՐ ԲՈՂԵՐ

8. ԵՐԶՆ ԿԱԾԻՈՑ ՄԱԾԹԻՒ

ՄԵԿՆ ԱՒԹԵԱՆ Մէջ

(Տպ. Պուր 1825)

(Ժար. տես 1917 թգմ. էջ 414)

ԱՅօսրաբար «անզգալի կերպով». Յան-
կարծակի արագ անօսրաբար ի վերայ հա-
սանեն (մոլութիւնը) և ըմբռնեն զոփին (էջ
290 ր):

Բաեայ «կիրով ծեփած». Գրեաց ի վե-
րայ րոեայ սեղանոյն զօրէնան յանցան
թորդանանու (էջ 456 ա): — Սովորաբար
կ'ըսուի բահալ, ուստի մեր բառն ալ կրնայ
ըլլալ սիսալ զրչութիւն մը՝ փորիսնակ ը-
սելու բահալ. բայց կրնայ նաև կազմուած
ըլլալ-հայ մասնիկով:

Դասախոսի «չարաչար թշնամի». Նըր-
բագունից այլոց յանցանաց զառնոսին
լինիցին և զսուարազոյն մեզս քո ան-
տես ունիցիս (էջ 170 ր): — Բառարան-
ներու մէջ չէ նշանակուած, թիրես անոր
համար որ իրեւ երկու բառ (դասին ոսին)
առնուած է:

Դիմապորա «սատանայ». Որ ոչ միա-
նայ ընդ իս հաւատովք՝ նա ինքն սա-
տանայ է. Կ որ ոչ ժողովէ ընդ իս գոր-
ծովք՝ ցրուէ նա ընդ գես զանձն իւր բան-
զի կոչի և սատանայ դիմապորս, որ է
ցրուեալ (էջ 276 ր): == յն. Խնձօլօս
(լտ. diabolus) «սատանայ» բառն է, որ
իրօք բուն կը նշանակէ «բամնոյ», ցրուող,
ատելութիւն կամ նախանձ ներշնչող»:


Ժայերիկս. «սխալ զրչութիւն»: Զդառ-
նութիւն նշի անուշացուցանեն ի ձեռն ա-
րուեսաին, զի գրեեկնի ժայերկս փայտ
գարսեալ ուռամբ յարմատս ասացեալ

անկոցդ՝ փոփոխեն զրնութիւն (էջ 178
ա): Պէտք է ուղղել զակեկս: Երգնկացին
այս կտորը փոխ առած է Բարտադի Վեցօ-
րէից խանզարեալ մէկ օրինակէն. հմմտ.
Յորժամ գարիցն առ արմատովք երիթ
[ուռն] պարաբո ի թեկն [ի պեկէս] փայ-
տէ և գարիցի ուռն և մտանիցէ ի սիրտ
ծառոյն (տպ. Վենեսու. էջ 97), ուր ան-
կինաւոր փակազծի մէջ զրուածները յե-
տին աւելազրութիւններ են, որոնք չկան
Անտոնինաց լաւագոյն ձեռագրին մէջ՝ ըստ
Պատկեր 1893, էջ 61 և ՀԱ 1911, էջ
302:

Մօրբուերդի «մօրբացեռորդի». Քանզի
չորբեցին եղբարք սոցա մօրբուերդորդից են
թիսուսի, զորս եղբարք Տեառն կոչեմք...
Քանզի ի բազում տեղիս գտանեմք ի զրոց
սովորութեանց՝ զհօրեղբորորդիս և զմօր-
բուերդորդիս եղբարք կոչել (էջ 605 ա):

Վայրայածուրդին «ասդին անդին կամ
դուրսը թափառիլը». Այծիբն վասն սեռու-
թեան և անպտղութեան, միանգամայն և
վասն վայրայածութեան ոչ միայն ի ձախ-
մէ, այլ և հեռագոյն իսկ ի նմանէ [կար-
գեցան] (էջ 539 ա):

Տամէկի «մարգու նեղութիւն տուող, չար-
չարող». Կամի (թիսուս) զմեզ անխակասս
և կատարեալս լինել, ոչ միայն ի հար-
կանել, այլ և ըընչից և ի հանդերձիցն
զերծանել, բայց տես, զի ոչ որ ոք պա-
տահէ տաճիկ ասէ, այլ որ դառէ և յա-
տեսն զեկզ մղիցէ և աշխատութիւնս հա-
սուցանէ (էջ 125 ա): — Եատ հետացրցրա-
կան է տամէկի ազգանունին տրուած փո-
խարերական այս իմաստը, որ գործածա-
կան է նաև արդի զաւառականներուն մէջ
(հմմտ. Պլ. տամէկի կորիի, տամէկի դասեալ
ևն), և որ կ'ուզուի մինչև անգամ Քրիս-
տոսի բերանը զնէւ:



ՄԻՒԱՑԷԼ ԱՍՈՐԻԻՆ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷջ
(Տպ. Երևանագետ. 1870)

Աղևմ կամ Աղևմ՞ « ներկուած սեկ՝ կաշի » . Եթող զիին և զգեցաւ հանդերձ փիլսոփայի, սեկ ներկեալ՝ զոր աղէմն կոչեն , և ծաղր արար զժիրանիսն (էջ 164) . — Խնչ լեզուի բառ է :

Աղեցառորին « աղիքի հիւանդութիւն » . Անկաւ յախա աղեցառութեան և մեռաւ ոչ բարւոր (էջ 385) :

Աղբատատուն « աղբատանոց » . Կոչեն նորա դամփէ, որ է աղբատատուն (!) (էջ 416) :

Ավիրացիակ « ամիրայ եղած » . Եթող զնա ամիրացեալ տղային եղբօրորդւոյ իւրոյ (էջ 447) :

Անանեանարորդին « անձ չունենալը » . Ի քանի՞ն բաժանի բնութիւնն . — Յերկուաւ յանձնաւորութիւն և յանանձնաւորութիւն (էջ 461) :

Անբուր « կայսր » . Աւամանաց թագաւորն Անբուրն . Տացին զԱնբուրուն ի ծեռա նորա . Յղեաց առ Անբուրն . Ետ սիրով զերուսազէմ յԱնբուրն . Ան, էջ 530-531 (միշտ իր յատուկ անուն) : = Ֆրանս առեցեր .

Անզատապէս « առանց զատուելու, չսնա ջատուելով » . Անզատապէս բաժանեալ և անխանարար միաւորեալ (էջ 533) :

Անզարդասէր « զարդ չսիրող, պարզասէր » . Ողջախոն և ցածուն և անզարդասէր (էջ 515) :

Անբուապատիկ « անթիւ » . Անշղուի պարտուց մերոց, անթուապատիկ բիւրուց տաղանդաց (էջ 613) :

Անբրափի « անլուր կերպով » . Անլրապէս պահանջումն հարկաց ճշդիւ (էջ 617) :

Անձի « առանց ձիու » . Ելին Ակլաւքն անզէն և անձի և մերկը (էջ 296) :

Անքակելի « անքակտելի » . Ոչ բաժանեալ ի մարմոյն և ի հոգւոյն, միաւորեալ անցակելի (էջ 576) :

Ազստամբանոց « ասպստամբներու բոյն » . Եւ է անդ բերդ մի միշտ ապստամբանոց լեալ (էջ 377) :

Ալատիանայ « առզմամբներց » . Ալին զամենայն ծանրութիւն ոռնկացն նոցա և զառատիսանայս նոցա կոչեցեալն զնետսն և զաղեղունս և զնիզակն և զվանս նոցա և զամենայն պարարտութիւնս սպասուցն . (էջ 485) : = Կը թուի թէ աղճատուած պարսկերէն բառ մ'է հմմտ . զարպիանա, ձեկիսանա ևն, ինչպէս աղճատուած է նաև պարարտորինս, որ պէտք է կարգալ պատրաստորինս :

Ասողչակիր « ասողջութիւն կրող, ասողջ » . Ասողջակիր մարմնով և անուանի փառօք (էջ 621) :

Ասուղջազեղ « ասստղերու պէս գեղեցիկ » . Զաստեղազեղ բանակն ցուցանէին իրրկ զկոյսու գերրուկ քարանց (էջ 497) :

Աստղավար « ասստղարաշի » . Եւ մասն մի յաստղավարց ուսցին զտումարական արուեստն, զի անմոլար վարեսցեն զտօնս և գտամանակն (էջ 158) :

Աստուածամուխ « Գրիստոսի Աստուծոյ արեան մէջ միտուած » . Կեղարդն աստուածամուխ (էջ 600) :

Աստուածապատիկա « Աստուծմէ պատկոող՝ վախցող » . Ջիրցն ոչ կարաց խախտել (սատանայ), զի աստուածապատիկառ էր (էջ 572) :

Արծարատորին « բուրիչէն ստակ առնելլ՝ իր վարձը կամ կաշառը » . Բարձ զկեսու անունդ զարծաթառութեան ի պարզես Հոգւոյն (էջ 472) :

Արծարարատորին « արծաթ շինելու արհեստը » . Ուսուցանէր ցիմեայս՝ արուեստն ոսկեգործութեան և արծաթարարութեան (էջ 442) :

Արձափակի « կապարով գոցած » . Գտան երիս տապանս արձնափակս (էջ 272) :

Արտաստապատում « լալով պատմած » . Սուրբ հօրն մերոյ Ներսիսի արտաստապատում ողբոցն (էջ 614) :

Արքայանայր « թագաւորահայր » . Արքայահայրն Հայոց պարոն կոստանդին (էջ 612) :

Բազմատորափ «տարափի պէս շատ»։ Կացին անյաղթելիս ընդէմ բազմատորափ փորձանաց և դիպուածոց աջոյ և ձախոյ (Էջ 597)։

Բահանար «պատգամարեր»։ Անուանաց զնոսա հրեշտակս որ է բանատարս, զի տանէին առնա բանս (Էջ 536) (ստուգարաննելով պրս. Ֆերիչըք բառով)։

Բանատանու «բանտերու վերատեսուչ»։ Բանատանեսքն՝ որք տեսանեն թէ նյը են զուր և զրպարտութեամբ արգելեալը ի բանտու յիշխանացն, և պատմել հայրապետին. զի փոյթ արասցէ և հանցէ զնոսա (Էջ 580)։

Բորոքիր «կոր շրջանակ»։ Արարին բորոքիրս և կացին շուրջ զնովաւ (Էջ 398)։

Գնայուն «շարժական (առարկայ)»։ Ածելով ընդ ինցեան զերիս ուս սակաս և յուրովութիւն աւարի կայուն և զնայուն (Էջ 445)։

Գովկարտին «գովկասանք»։ Անթերի ի գովկելութենէ, աստուածապաշտ և երկիւղած (Էջ 515)։

Գաշուակէ «զաշտին մէջը, միջավայրը»։ Կամէին ելանել ընդդէմ նոցս ի զաշտամէջն գառնի քաղաքոյ (Էջ 527)։

Դիմիստ «բանտ»։ Խակ վաղէս ես շինել յիշտիրը դիմիսոն, որ է բանդ ուղափառաց (Էջ 175)։ յն, ծնդօծուց, առ «պետական բանտ»։

Դիմու «հարկ, տուրք»։ Ի զրունս մահու հասուցին զաշխարհս անողորս տանջանօք՝ վասն դիմոսին անիրաւութեան (Էջ 362) (տպագրին մէջ իրը յատուկ անուն կարծուած է)։ Դուք հարկս տայց Պարսից. և նորա ասեն՝ ոչ. այլ նորա սեզ տան զիմոսս (Էջ 399)։

Դիրմատոր «կնքուած, ցրիստոնէական դրոշման ընդունած, հաւատացեալ»։ Հօտն դրոշմատոր և գառինըն երկնաւոր՝ գազանաց մատնեցան (Էջ 497)։

Եղիտ «Եզր կաթողիկոսի մոլորութեան՝ հետևող, երկարնակ»։ Նզովեցին զթուլիանիտոն... և զեզրիտոն (Էջ 853)։

Երտպարոյ «երազ մեկնող»։ Զար-

թոյց ի ցնոյ զայրն երազալոյծ և ասէ (Էջ 337)։

Ետուկարտոր «ինքնակալ»։ Զօրացեալ լիւսիոս յազթեաց նոցա և կոչեցաւ Եւտուկարտոր (Էջ 143)։ Եւտուկարտոր կայսր թէոդոս և Վաղեն (ստիանոս (Էջ 193). Ինքնակալդ Եւտուկարտոր Մարկանէ (Էջ 249)։ (բոլորն ալ իրը յատուկ անուն)։ յն, անուշաբեածօր.

Զգուշակենցաղ «մաքրակենցաղ»։ Զգուշակենցաղ թագուհւոյն իւրոյ Զապեկի (Էջ 612)։

Զինաբարար «զէնքով բեռնաւորուած»։ Յիսուն երկու հազար զրաստս զինաբարած (Էջ 483)։

Թագակալուրիւն «թագաւորութիւն»։ Վերասին նորոգեցաւ թագակալութիւն արամեան զաւակին (Էջ 619)։

Թեւերեկուրիւն «թեւերը կոտրուիլը, ընկնուիլը»։ Այլ մեզ թեւերեկութիւնն է ցանկալի (Էջ 498)։

Թվոսիր «խորհուրդ»։ Թվոսրով հօրիւրոյ կամեցաւ ըմբռնել զերկուս մեծամեծ իշխանան (Էջ 525) (մէկ Յ. բապով)։ արար. յամ tedbigr «հնարք, միջոց»։

Թրիստ «արմաւ կամ փինիկ թըռչունը»։ Զեզ է ամաչելն՝ պաշտողացդ զթոշունն թրիստ, որ է արմաւն (Էջ 67)։ նշանակութիւնը թէկ ակներեէ, բայց ինչ լեզուի բառ ըլլալը յայտնի չէ ինձ։

Ժողովրդականուրիւն «աշխարհականութիւն»։ Զատեան (քահանայն) ի ժողովրդականութենէ և ի սարկաւագութենէ (Էջ 660)։

Լիահաւատ «ջերմեռանդ հաւատացեալ»։ Անզարդաւէք և լոին, լիահաւատ և մեծայոյս (Էջ 515)։

Ծանծաղապէս «երեսանց»։ Ընկալեալ եղէ անդ առացեալն յերկիւզէն Արգարուատ ժամանակ մի հաւատացեալ իշխանին ծանծաղապէս (Էջ 595)։

Ծովամուխ «լուղորդ»։ Ետ ածել անտի արս արուեստաւորս ծովամուխս հնարիմաց (Էջ 377)։

Նարունակելի Հ. ԱնԱՌԵԱՆ